հնարավոր վարել ինտերնացիոնալիստական քաղաքականություն։

Սեմինարի բացմանը ներկա էին ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Կ. Լ. Դալլաքյանը, ՀԿԿ Կենտկոմի բաժնի վարիչներ Լ. Պ. Մանասերյանը, Ցա. Ի. Խաչիկյանը և ՀՍՍՀ Գերագույն սովետի Նախագահության քարտուղար Մ. Մ. Բախչինյանը։

ԱՐՏԱՇԵՍ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ 60-ԱՄՅԱԿԻՆ

Դնայով ամրապնդվում է անդրկովկասյան հանրապետությունների պատմաբանների համագործակցությունը։ Վերջին տարիների նրանց համատեղ ջանքերի արդյունքն են երկրամասի հեղափոխական շարժումների, կոմունիստական կազմակերպությունների, ժողովուրդների լենինյան բարեկամության պատմության վերաբերյալ դիտական մի շարք կոլեկտիվ ուսումնասիրությունները։ Պատմաբանների երիտասարդ սերունդը ձգտում է օգտագործել ավանդների հարուստ փորձը և շարունակել նրանց ավանդները։ Դրա լավագույն վկայությունն էր վերջերս Աղվերանում տեղի ունեցած դիտական նստաշրջանը։ Այն կազմակերպել էին Հայկական ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտը և «Գիտելիք» ընկերության հանրապետական վարչությունը՝ Վրացական և Ադրբեջանական ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտների հետ համատեղ։ Նստաշրջանին մասնակցում էին նաև Մոսկվայի և Կիևի երիտասարդ պատմաբանների ներկայացուցիչները։

Նստաշրջանը, որը նվիրված էր Անդրկովկասում սովետական կարգերի հաստատման 60-ամյակին, ներածական խոսքով բացեց ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի դիրեկտոր, պատմական գիտությունների դոկտոր Հ. Ա. Ավետիսյանը։ Նա երիտասարդ գիտաշխատողների ուշադրությունը հրավիրեց այն պրոբլեմների և խնդիրների վրա, որոնք կուսակցությունը դնում է գիտության աշխատողների առջև։

«Մեծ Հոկտեմբերի հաղթանակը Անդրկովկասում» զեկուցումով հանդես եկավ Ռ. Լ. Խուրշուդյանը։ Ուշադրավ էին նաև զարգացած սոցիալիզմի պրոբլեմներին նվիրված Ի. Ի. Բոյկոյի (Մոսկվա) «Բանվոր դասակարգի կուլտուրատեխնիկական մակարդակ հասկացողության բնորոշման մասին», Ռ. Լ. Ազիզբեկյանի, Վ. Ա. Հակոբյանի, Մ. Ա. Գրիգորյանի «Սովետական Հայաստանի սոցիալական կառուցվածքի հիմնական միտումները հասուն սոցիալիզմի ժամանակաշրջանում», Վ. Մ. Միշչենկոյի (Կիև) «Ուկրաինական ՍՍՀ-ի և Հայկական ՍՍՀ-ի գիտնականների համագործակցության զարգացումն ու խորացումը զարգացած սոցիալիզմի պայմաններում», Մ. Ցու. Խալիզովի (Բաքու) «Ադրբեջանական ՍՍՀ գյուղատնտեսական արտադրության զարգացման մեջ որակավորված կադրերի դերի բարձրացումը (1965—1975 թթ.)» թեմաներով զեկուցումները։

Ա. Գ. Դաուշվիլու, Գ. Վ. Սարաջիշվիլու (Թբիլիսի), Հ. Մ. Հարությունյանի և Գ. Ա. Խաչատրյանի զեկուցումներում քննվում էին սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանի հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր։ Արևելյան Հայաստանի և Անդրկովկասի պրոլետարիատի կազմավորմանը, թվաքանակին և պայքարի առաջին քայլերին էին վերաբերում Ա. Գ. Սիմոնյանի (Մոսկվա), Գ. Լ. Կիրակոսյանի և Վ. Խ. Հովակիմյանի զեկուցումները։ Որոշակի թիվ էին կազմում պատմության հին շրջանին նվիրված զեկուցումները, որոնցով հանդես եկան Գ. Շ. Գոգեբիձեն, Մ. Ս. Զխարաիշվիլին (Թբիլիսի), Ցու. Ջաֆարովը (Բաքու), Ֆ. Վ. Շելով-Կովեդյաևը (Մոսկվա) և Գ. Դ. Վարդումյանը։

Նստաշրջանում լսվեցին նաև պատմագրության մի շարք պրոբլեմներին նվիրված զեկուցումներ։ Հետաքրքրություն առաջացրեց ՍՍՀՄ-ում ազգային կուլտուրաների զարգացման հարցերի վերաբերյալ ամերիկյան պատմագիտության հիմնական տեսակետների վերլուծությունը, որը նստաշրջանի մասնակիցներին ներկայացրեց Գ. Գ. Մախմուդյանը։ Սովետա-չեխական բարեկամությանն ու համագործակցությանն էր նվիրված Լ. Պ. Կոլոլնիկովայի (Մոսկվա) զեկուցումը։ Հին աշխարհի պատմության սոցիալ-տնտեսական հարցերի ուսումնասիրման լենինյան մեթոդին էր վերաբերում Ռ. Լ. Մանասերյանի զեկուցումը։

Զեկուցումները մեկ անգամ ևս վկայեցին, որ երիտասարդ պատմաբանների հետաքրքրության շրջանակները դարձել են ավելի լայն, իսկ հետազոտությունների մակարդակը՝ ավելի խորը։ Տպավորիչ էին զեկուցողների եզրահանգումները, որոշակի ճշտումները և լրացումները, որոնք, անկասկած, գիտական հետաքրքրություն են ներկայացնում։

Նստաշրջանին բնորոշ էին գիտական սկզբունքայնությունը և աշխույժ բանավեճը, մտքերի անկաշկանդ և ակտիվ քննարկումը, որին մասնակցեցին նաև պատմական գիտությունների դոկտորներ Վ. Բ. Բարխուդարյանը, Հ. Մ. Բարթիկյանը, Կ. Ս. Խուդավերդյանը, Ց. Պ. Քալանթարեն և ուրիշներ։ Ավագ և կրտսեր սերնդի այս անմիջական գիտական հաղորդակցությունն օգտակար և ուսանելի շատ բան տվեց երիտասարդ պատմաբաններին։

Նստաշրջանի մասնակիցների առջև հանդես եկավ «Մոլոդայա գվարդիա» հրատարակչության դիրեկտոր, պատմական գիտությունների թեկնածու Վ. Դեսյատերիկը, որի զեկուցումը նվիրված էր ՌԿԵՄ III համագումարում Վ. Ի. Լենինի արտասանած «Երիտասարդության միությունների խնդիրները» ճառի 60-ամյա տարելիցին։

Գիտական նստաշրջանի արդյունքներն ամփոփեց Հ. Ա. Ավետիսյանը։ Նա զեկուցողների մի մեծ խմբի հանձնեց ՀՍՍՀ «Գիտելիք» ընկերության և ՀԼԿԵՄ Կենտկոմի պատվոգրեր։

ՎԱՉԵ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ